
**ԲՆԻԿ ԵՎ ՓՈԽԱՌՅԱԼ ԻԳԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Ա.

Ինչպես գիտենք, հատկանվանագիտության գիտաճյուղերից է անձնանվանագիտությունը, որը մարդկանց անունների ամբողջությունն է: Այն ներառում է անձերի անունները՝ տարբեր դրսևորումներով կամ ածանցումներով: Անձնանունների այդ տարբեր տիպերը պատմական նշանակություն ունեցող բառայիններ են, որոնցից յուրաքանչյուրը ծագել է որոշակի ժամանակահատվածում՝ տվյալ ժողովրդի կոնկրետ հասարակական միջավայրում¹: Բացի այս, թե՛ անձնանունները և թե՛ տեղանունները, լեզվի բառապաշարի կարևոր շերտերից լինելով, տվյալ ժողովրդի լեզվում էթնոլեզվական դեռևս չճշտված բազում իրակությունների բացահայտման խթան կարող են հանդիսանալ:

Ամեն անուն ունի իր պատմությունը, «կենսագրությունը», աշխարհագրական տարածումը, ծավալումն ու ազգային պատկանելությունը: Հենց իր պատմության, ժամանակի և տարածության մեջ է նկատվում անվան շարժընթացը: Այն փոխառվում է կամ նույնությամբ, կամ մասնակի ձևափոխությամբ: Այս օրինաչափությամբ էլ, ինչպես հայերը, այնպես էլ շատ ժողովուրդներ, իրենց անձնանունները փոխառել են այլ ազգերից: Օրինակ, լատինական անձնանվանագիտության մեջ կան շատ էտրուսկական անուններ, իսկ թուրքալեզու ժողովուրդների մեջ գերազանցում են ոչ թե թուրքական, այլ արաբական և իրանական ծագում ունեցող անունները: Եթե ֆրանսերենում գրեթե ֆրանսիական անուն չկա (դրանք վերցված են կաթոլիկ Հռոմից), ապա հնդիկների անվանացանկում, ընդհակառակը, օտար անուն չկա: Նույնը վերաբերում է արաբներին, չինացիներին²:

Անձնանուններն ունեն սոցիալ-հասարակական բնույթ, ինչպես սոցիալական բնույթ ունի լեզուն, որը գոյություն չունի հասարակությունից դուրս: Անունների սոցիալական բնույթը պայմանավորված է քաղաքական, տնտեսական զարգացմամբ, որի ընթացքում ի հայտ են գալիս լեզվական իրողություններ, որոնք արագ թափանցում են հասարակության մեջ և տեղ գտնում լեզվի բառապաշարում:

Հասարակության մեջ չկա մեկը, որ անուն չունենա: Ծանոթանալիս ներկայանում են անունով: Ընտրողը գալիս է քվեարկելու, աշխատողը աշխատավարձ է ստանում, հասցեատիրոջը տալիս են պատվիրած նամակը. բոլոր դեպքերում էլ ճշգրտում են անունը, ազգանունը, հայրանունը: Սա վկայում է անձնանունների՝ հասարակության մեջ բազմաբնույթ, պատասխանատու և անփոխարինելի դեր ունենալու մասին, անկախ այն փաստից, թե դրանք անհատական անվանումներ են, թե այդ անվանում-

¹ **Никонов А. В.**, *Имя и общество*, М., 1974, с. 3.

² Նույն տեղում, էջ 5:

ների տարբեր ձևեր (փոքրացուցիչ-փաղաքշական, նվազական-նվաստական), ազգանուններ, հայրանուններ կամ էլ մականուններ: Ճիշտ է, հայտնի չէ, թե երբ, ինչպես և հասարակության ու լեզվի զարգացման որ շրջանում են դրանք առաջացել, բայց մի բան պարզ է, որ դա կապվում է դարերի պատմության հետ, և հայտնի է դեռևս վաղնջական ժամանակներից:

Հատկանվանագիտության մեջ ինչպես տեղանվանահիմքերը, այնպես էլ անձնանվանահիմքերը երկու կարգի են բաժանվում՝ պարտադիր (իմպերատիվ) և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ): Պարտադիրներն այս կամ այն անհատին բնութագրում են ֆիզիկական թերություններով ու առանձնահատկություններով՝ մարդուն համեմատելով տարբեր առարկաների, կենդանիների, թռչունների, բույսերի հետ, ցույց տալիս մասնագիտությունը, զբաղմունքը, սոցիալական դրությունը և այլն: Ոչ պարտադիր անձնանվանահիմքերը դիպվածային են³:

Անունները ծագումով լինում են բնիկ և փոխառյալ: Եթե համեմատենք հասարակ և հատուկ անունների փոխառության ընթացակարգը, ապա կտեսնենք, որ վերջիններս ավելի հեշտ ու արագ են անցնում մի լեզվից մյուսին, քան հասարակները, թեև «տեղանունները շատ ավելի կայուն են, հեշտությամբ և առանց անհրաժեշտության չեն փոխվում, մինչդեռ անձնանունների գործածությունը մեծ չափով կապված է քաղաքական, մշակութային, կրոնական գործոնների հետ. այստեղ մեծ դեր են խաղում տվյալ ժամանակի ըմբռնումները, մոդան, անձնական հակումները»⁴: Մի լեզվից մյուսին անցնելիս փոխառյալ անունները ձգտում են գտնել իրենց տեղը փոխառու լեզվի համակարգում՝ ձեռք բերելով առավել հարմար հնչյունական և ուղղագրական պատկեր: Մա է պատճառը, որ ցանկացած լեզվի հատուկ անունների թե՛ ծագումնաբանական և թե՛ հնչյունական կազմը չափազանց խայտաբղետ է:

Քանի որ փոխառված անուններում մթազնվում է անվան ազգային պատկանելությունը, այդ անունները չեն թարգմանվում: Ամրագրվելով միջազգային բառապաշարին՝ միևնույն անունը միևնույն հնչյութակազմով կարող է պատկանել մի քանի լեզուների: Սակայն, չնայած միջազգայնականությանը, միևնույն է, դրանք ունեն վառ արտահայտված ազգային բնույթ:

Հին շրջանի բնիկ հայերեն արմատներով կազմված իգական անունները հատկապես -ակ, -իկ վերաբերմունքային ածանցներով կազմված անուններն են՝ Արուսյակ (համանուն մոլորակի անունից, կրճատմամբ դարձել է՝ Արուս, որ բնավ կապ չունի ԺԳ դարում գործածված Արուս՝ արաբ. «հարս» բառից առաջացած անվան հետ), Թիթեղնիկ «թիթեռնիկ», Խընչիկ (ծագումն անհայտ), Ծովակ: Հետաքրքիր է, որ Ծովակ-ը հետագայում իգականից վերածվել է արականի՝ պայմանավորված -ակ ածանցի առավելապես արական անուններ կազմելու հաճախականությամբ: Միջին և նոր շրջաններում -ակ-ով կազմված իգական անուններ գրեթե չկան:

³ Суперанская А. В., Структура имени собственного, М., 1969, с. 23-24.

⁴ Չառնուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 412:

Այս և հետագա շրջաններում էլ բացառություն է Արուսյակ անվան գործածությունը:

Հիշյալ անունների շարքը համարվում է հասարակ անուններից առաջացած Բյուրեղ, Դշխ, Ոսկի անձնանուններով: Վերջինս հնագույն շրջանում եղել է արական, հին շրջանում՝ իգական, իսկ միջին շրջանում՝ ն՛ արական, և՛ իգական անուն:

Ըստ վիճակագրական տվյալների՝ հին շրջանում գործածված բնիկ հայերեն արմատներով կազմված անունների համեմատ փոխառյալներն ավելի շատ են՝ պայմանավորված, անշուշտ, այլ ազգերի՝ առավելապես պարսիկների քաղաքական գերիշխանությամբ, ինչպես նաև հունական պատմամշակութային ազդեցությամբ:

Այս շրջանում «դուխտ» և «անուշ» պարսկական ծագում ունեցող անձնանվանակերտ բառերը շարունակում են կազմել նորանոր իգական անուններ՝ Գորիդուխտ (գոր-«ցիռ»), Գարունդուխտ (գարուն), Կատրամիդուխտ (Կատրամիդե՝ ծագումն անհայտ), Մահակադուխտ (սահակ-«ծաղր կամ ուրախություն»), Քուպրիդուխտ (Քուպրի՝ ծագումն անհայտ), Խոսրովանուշ (Խոսրով՝ «բարեհամբավ»), Հրանուշ (Աճառյանը կեղծ է համարում հուր+անուշ-ից առաջացած լինելը՝ վկայաբերելով հրա արմատի՝ մեկ այլ քերականի (Justi) ստուգաբանությունը՝ հրա <Հրահատ <պիլ. Frabāt «անուն տալ, դնել, երևան հանել»): Այս անունների առաջացումն ըստ էության կապվում է ազգային սովորության հետ: Հնում, այդ սովորության համաձայն, կնոջ անունը տալն ամոթ էր համարվում, ուստի նրան դիմում էին «այսինչի աղջիկը» ձևով՝ Մահակադուխտ «Մահակի աղջիկը», Գորիդուխտ «Գորի աղջիկը» և այլն: Նշանակում է՝ սրբանք սկզբնապես անձնանուններ չեն եղել: Այսօր էլ որոշ մարզերում և տարածաշրջաններում պահպանվել է այդ սովորույթը՝ մեկ այլ տարբերակով՝ Բալասանի աղջիկ, Զարդալամի աղջիկ, Նունուֆարի աղջիկ և այլն (Տավուշի մարզ):

Իգականակերտ ձևույթներից է նաև -ուհի ածանցը՝ դարձյալ փոխառված պարսկերենից: Սրանով բաղադրված հիշատակվում են Համամուհի (արաբ. համամ «վայրի աղավնի»), Համասպրուհի (հյ. համասպրամ ծաղկանունից) և Տրդատուհի (պիլ. Տրդատ «Տիր աստծու տվածը») անունները:

Համա (պրս. huma բառից է, որ առասպելական թռչուն է, որն ում վրա նստեր, թագավոր կլիներ), Շահինշահ, Սպարամ (պիլ. sparām, պրս. siparam «ռեհան»բառից, որից էլ հյ. շահասպրամ, համասպրամ ծաղկանունները) անունները դեռևս հին շրջանում հայերենին խորթ, չմերված անուններ էին: Մինչդեռ անունը, ըստ Հր. Աճառյանի, կարող է հարատևել, եթե այն կարճ ու հնչեղ է, գեղեցիկ է նշանակությամբ, և եթե այն որևէ նշանավոր անձի անուն է:

Հայաստանի քրիստոնեական կողմնորոշումից հետո (III դ. վերջ) հայերը սերտ հարաբերությունների մեջ մտան հույների հետ, ինչն էլ նպաստեց հունական անունների ներմուծմանը հայերենում: Այդ անուն-

ների մի մասն առաջացել է արական անուններից՝ -ու, -իս հնչյունակապակցությունների տղամար, կամ էլ՝ -իա իգականակերտ ածանցի հավելմամբ՝ Թեոդորոս > Թեոդորա, Թեոֆանիս > Թեոֆանո, Նարկիսոս > Նարկիս (Նարկիս/Նարգիզ/Նարգիս/«համանուն ծաղիկը»), Սոպատրոս > Սոպատրա. Թեոդոս > Թեոդոսիա, Սահակ > Սահակիա: Կան նաև նույնությամբ փոխառված անուններ՝ Թեոկտիստա, Իրենե, Կալի: Նկատելի է նաև այն փաստը, որ հայերենում արմատացած հունական անունների թիվն այնքան էլ մեծ չէ իրանական անունների համեմատությամբ: Սրանցից փոխանցվել և այսօր էլ գործածական է Նարգիզ անունը միայն:

Եբրայական անուններ գրեթե չկան: Ունենք ընդամենը 1 անուն՝ Թամար «արմավենի»:

Հր. Աճառյանի ենթադրությամբ՝ արաբական ծագում ունի Սեդա անունը «տիրուհի», որի արականը լինում է Մայդի=արաբ saydi «տեր իմ»: Ոմանք էլ գտնում են, որ Սեդա անունը ծագում է արաբ. sada «ձայն» բառից, որն, իհարկե, քիչ հավանական է, և կարծում ենք, որ այս ձևերից նախընտրելին Աճառյանի մեկնությունն է:

X դարում են գործածվել Խուշուշ, Ռուզուքան (հետագայում մեծ տարածում է գտել այս անվան կրճատ Ռուզան ձևը), Կատրանիդե անհայտ ծագման կամ չստուգաբանված և եվրոպական Կատա (կրճատված Կատարինե «մաքուր» անձնանունից) անունները:

Այսպիսով, վերոբերյալը թույլ է տալիս կարծելու.

1. Հին շրջանում գործածված հայոց իգական անուններում գերակշռում են պարսկական և հունական անունները, որոնցից մի քանիսն են արմատացել հայերենում, մնացածները հետագայում դադարել են գործածվելուց: Այդ անունների մուտքը հայերեն անխուսափելի էր, քանի որ հայերը քաղաքական- մշակութային և կրոնական բնույթ կրող երկարատև շփման մեջ են եղել թե՛ պարսիկ ժողովրդի և թե՛ հույների հետ: Բացի այս, «Ի տարբերություն հնդեվրոպական այլ հին ժողովուրդների (հընդիկներ, իրանցիներ, հույներ և այլն)՝ հայերը հակում են ունեցել բուն հայկական անձնանունները փոխարինելու այլազգի անձնանուններով, այսինքն՝ գործածելու սեփական լեզվական միջոցներով չբացատրվող (ոչ պարզ էտիմոնով), միայն անձնանվանական գործառնություն ունեցող միավորներ»⁵:

2. Եթե ազնվականությունը պահում էր պարսկերենից ժառանգած անունները, ապա հոգևորականությունը, առանց հեթանոսական անուններից հրաժարվելու, ընդունում է քրիստոնեական, հատկապես աստվածաշնչյան անուններ: Սկսում են Հայաստան ներթափանցել հունական, եբրայական և այլ օտար անձնանուններ, որոնք մեր լեզվաշերտից աստիճանաբար դուրս են մղում մեծ քանակությամբ բնիկ հայկական անուններ: Հետևանքը լինում է այն, որ փոխառյալ անուններն իրենց թվաքանակով և գործածության հաճախականությամբ գերազանցում են բնիկներին:

⁵ Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 408:

3. Գրավոր աղբյուրներով մեզ հասած փոխառյալ անձնանունները պատկանել են հատկապես հայոց թագուհիներին (մեծ մասամբ ազգությամբ ոչ հայ), իշխող վերնախավի կանանց ու օրիորդներին, որոնք քաղաքական, մշակութային, կրոնական շփման մեջ են եղել օտար ժողովուրդների հետ: Իսկ հասարակ ժողովրդի անուններից, ցավոք, ոչ բոլորն են հիշատակության արժանացել, քանի որ հասարակ մարդիկ պատմիչների համար կարևոր դեր չեն խաղացել:

4. Անունները լինում են ժողովրդական (հանրամատչելի) և ոչ ժողովրդական (ոչ հանրամատչելի), հաճախված և հազվադեպ: Այստեղ մեծ դեր են ունենում ավանդույթը, սովորույթները, անվանադրի ճաշակը, ինչպես նաև անվան հնչեղությունը: Վկայված բնիկ հայերեն արմատներով կազմված անուններից պահպանվել են Արուսյակ, Ծովակ (այժմ՝ արական) և Ոսկի (հազվադեպ), իսկ փոխառյալներից՝ Թամար, Հրանուշ, Ռուզան, Սեդա անունները: Եզակի գործածվածները մնացել են սոսկ արխաիկ անուններ՝ Գարունդուխտ, Գորիդուխտ, Թեոկտիստա, Թեոֆանո, Կալի, Մուպատրա, Մպարամ և այլն:

5. Ըստ կազմության՝ պարսկական անուններում գերակշռում են բարդ և ածանցավոր անունները, իսկ հունարենում՝ միայն ածանցավորները: Հունական անունների մի մասը իգական անուններ են հենց հունարենում, որոնք նույնությամբ կամ մասնակի փոփոխություններով ուղղակի փոխառվել են՝ Իրենե, Թեոդոսիա, Թեֆանո, կամ էլ առաջացել են փոխատու լեզվում իբրև արական գործածված անունների հնչյունափոխված ձևերից՝ Թեոդորա < Թեոդորոս, Նարկիս < Նարկիսոս, Մահակիա < Մահակ և այլն:

Այսպիսով, հայոց իգական անուններում գերազանցում են փոխառյալ անունները, որոնցից հետագայում ոչ բոլորն են պահպանվել: Դրանցից շատերը դուրս են մղվել կապված ազգային ինքնագիտակցության զարթոնքի ու ժամանակի ըմբռնումների հետ:

ИСКОННО АРМЯНСКИЕ И ЗАИМСТВОВАННЫЕ ЖЕНСКИЕ ИМЕНА В ДРЕВНИЙ ПЕРИОД РАЗВИТИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ХАЧАТРЯН А. А.

Резюме

В древнеармянском языке наряду с исконно армянскими были распространены также заимствованные женские антропонимы (конец V в. – XI в.). В армянских женских именах преобладают заимствованные, что обусловлено как экстралингвистическим (политическим, культурным, психологическим), так и религиозным фактором.

Заемствованные женские антропонимы по своей численности превосходят имена, состоящие из армянских корней.